



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՀԻՂՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ  
ՏՆՕՐԵՆ**

« 02 » \_\_\_\_\_ 05 \_\_\_\_\_ 2022թ.

№ 08/ԼԱ/ - 357

**ՏԵՂԵԿԱԼՔ**

ՀՀ-ում 2022թ. ապրիլի 25-ից մայիսի 1-ը դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

Ապրիլի 28-30-ին, մայիսի 1-ին շրջանների զգալի մասում դիտվել է անձրև և ամպրոպ: Տեղումների առավելագույն գումարային քանակը կազմել է Ամբերդում, Պուշկինի լճում՝ 35մմ, Վարդենյաց լ-ցքում, Ապարանում, Հրազդանում Բագրատաշենում՝ 20-21մմ, Ստեփանավանում, Ծաղկահովտում, Տաշիրում՝ 17-19մմ, մնացած շրջաններում՝ 4-15մմ, Արարատյան դաշտում և Երևանում՝ 1-2մմ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը ողջ շաբաթվա ընթացքում բարձր է եղել նորմայից 3-5 աստիճանով:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է՝ Սյունիքի հովիտներում՝ +29...+30°C, նախալեռներում՝ +21...+22°C, Արմավիրում, Արարատում՝ +29...+30°C, Տավուշում՝ +26...+28°C, Վայոց ձորի նախալեռներում՝ +27°C, լեռներում՝ +20°C, Արագածոտնի նախալեռներում՝ +22...+28°C, լեռներում՝ +18...+20°C, Լոռիում՝ +23...+26°C, Կոտայքի նախալեռներում՝ +24°C, լեռներում՝ +20...+22°C, Շիրակում՝ +18...+22°C (Գյումրի՝ +24°C), Գեղարքունիքում՝ +16...+21°C, Երևանում՝ +28...+29°C:

Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է՝ Շիրակում 0...+5°C, Գեղարքունիքում՝ 0...+3°C, Արագածոտնի լեռներում՝ +1...+4°C, նախալեռներում՝ +8°C, Լոռիում՝ +2...+6°C, Վայոց ձորի լեռներում՝ +3°C, նախալեռներում՝ +8°C, Կոտայքի լեռներում՝ +2...+4°C, Սյունիքի հովիտներում՝ +12°C, նախալեռներում՝ +3...+8°C, Արմավիրում՝ +9°C, Տավուշում՝ +10...+12°C (Դիլիջան՝ +5°C), Արարատում՝ +9°C, Երևանում՝ +8...+10°C:

Ապրիլի 28-ին, 30-ին, մայիսի 1-ին, Արմավիրում դիտվել է քամու ուժգնացում՝ 16-17 մ/վրկ արագությամբ:

Ապրիլի 25-ի դրությամբ ձյան ծածկը պահպանվում է միայն 2500մ-ից բարձր շրջաններում՝ Արագած լ/լ-ում կազմելով 128սմ:

Շաբաթվա ընթացքում շարունակվել է գյուղատնտեսական մշակաբույսերի աճն ու ցարգացումը, եղանակային պայմանները նպաստավոր են եղել դաշտային աշխատանքներն իրականացնելու համար:

Լեռնային շրջաններում գարնանացան գարու հատիկը կտցել է, տեղ-տեղ՝ ձել, առաջացել են հնդավորների առաջին տերևները:

Հովտային շրջաններում շարունակվել է պտղատուների պտղի ձևավորման գործընթացը, բանջարանոցային մշակաբույսերի նախացանքային աշխատանքները, խաղողի վազի բողբոջները բացվել են, դաշտերում կատարվել են փխրեցման աշխատանքներ:

Ապրիլի 25-ից մայիսի 1-ը հանրապետության գետերում դիտվել է ջրի ելքերի փոփոխական ռեժիմ: